

**ՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ՌՈՒՄԵՐԵՆԻ՝ ՀԱԳՈՒՄՏ ԿԱՄ ՆՐԱ  
ՄԱՍ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՌ-ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ  
ԳԱՐԶՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԵՄՏՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**ՌՈՒԶԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ,  
ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ  
Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ  
rrdzh@mail.ru**

Հոդվածը նվիրված է հայերենի և ռուսերենի՝ հազուստ կամ նրա մաս անվանող բառ-բաղադրիչներով դարձվածքների համեմատական քննությանը:

***Բանալի բառեր.** հազուստ անվանող բառ-բաղադրիչներ, հազուստի մաս անվանող բառ-բաղադրիչներ, մշակույթի առանձնահատկություններ, համարժեքը չունեցող բառեր, մասնակիորեն համարժեքը չունեցող բառեր, մշակութային տեղեկատվություն կրող միավորներ:*

Այս կամ այն լեզվով խոսելիս մարդիկ գործածում են ոչ միայն առանձին բառեր և ազատ բառակապակցություններ, այլև կայուն վերախմաստավորված բառակապակցություններ՝ դարձվածքներ, որոնք խոսողության գործընթացում չեն ստեղծվում, այլ վերցվում են որպես լեզվում եղած պատրաստի կազմություններ, ինչպես որ բառերը: Խոսքի ռճական ճիշտ ընկալումն ու իմացությունը պայմանավորված են հատկապես այդ լեզվում տարածված դարձվածքների իմացությամբ: Առավելաբար կարևոր է այն դարձվածքների իմացությունը, որոնք, կազմելով տվյալ լեզվի դարձվածաբանական միջուկը, ունեն նաև ազգի մշակութային արժեքները ներկայացնելու հնարավորություն: Դրանց շարքն են դասվում հազուստների անուններ պարունակող դարձվածքները:

Սույն հոդվածում փորձ ենք անելու ուսմնասիրելու հազուստների անուններ պարունակող դարձվածքները՝ որպես ազգային-մշակութային տարրեր կրող միավորներ՝ դիտարկելով դրանք լեզվամշակութային տեսանկյունից:

Հազուստների անուններ պարունակող դարձվածաբանական միավորի իմաստաբանությունը համընկնում է բառաբանությանը, և որոշ դարձվածային միավորներ անվանում են երկրի անցյալի և ներկայի

այնպիսի երևույթներ, որոնք միշտ չէ, որ ունեն իրենց համարժեքները այլ երկրների և ժողովուրդների ազգային մշակույթներում:

Հայերեն և ռուսերեն դարձվածքաբանական միավորներն արտացոլում են յուրաքանչյուր ազգի մշակույթի առանձնահատկությունները, այսինքն՝ դրանց կազմիչ միավորները, տարրերը աշխարհաճանաչողական հարուստ նյութ են պարունակում: Դարձվածքաբանական միավորի կազմից որոշ բառեր կարող են համարժեքներ չունենալ, այսինքն՝ չեն կարող համեմատվել որևէ այլ լեզվի բառապաշարի հայեցակարգի հետ և չեն կարող թարգմանվել այլ լեզվով: Օրինակ, ռուսական և հայկական ազգային հագուստներն ունեն իրենց բնորոշ յուրահատկությունները, ուստի ազգային-մշակութային տեսանկյունից այս երկու լեզուներում էլ կան իրենց համարժեքը չունեցող (безэквивалентные) կամ մասնակիորեն համարժեքը չունեցող (неполноэквивалентные) բառեր՝ էկզոտիզմներ, որոնք տեղեկություն են տալիս նշված առարկայի, երևույթի, հատկանիշի կամ գործողության մասին տվյալ երկրին հատուկ մեկնաբանությամբ:

Տարաշխարհիկ բառերը (էկզոտիզմներ) այս կամ այն ազգի կենցաղային իրերը՝ հագուստ, նվագարան, ճաշատեսակները, սովորույթները, մշակույթն արտացոլող բառերն են, որոնք իրենց կապը չեն կտրել «սաղբյուր» լեզվից: Այս բառերը չեն յուրացվում փոխառյալ լեզվում, չեն կորցնում իրենց արտասանական առանձնահատկությունները և գործածվում են՝ տվյալ լեզվում օտար առարկան կամ երևույթը բնութագրելու համար:

Էկզոտիզմն այն է, ինչ բնորոշ է օտար ազգերի իրականությանը, կենցաղին, մշակույթին և ինչը բնորոշ չէ այլ ազգերին: *Էկզոտիզմ* բառը փոխառություն է հունարենից (exotisme) և նշանակում է «օտարերկրյա» այն բնութագրում է բառապաշարի ազգամշակութային շերտը, որն արտահայտվում է տվյալ լեզվում այլ ազգերի նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները ներկայացնող լեզվական միավորների կիրառմամբ: Այսպիսով, էկզոտիզմները մի ամբողջ ազգի մշակույթն ու կենցաղը բնութագրող անվանումներ են: Այս բառերը պայմանավորված են միայն տվյալ լեզուն կրող ազգի մշակույթով և կենցաղով կամ տարածքային առանձնահատկություններով: Նշենք դրանցից մի քանիսը ռուսերենում:

✓ *Сарафан* – «սարաֆան» – 1. կանացի թելթել, առանց թևերի ամառային զգեստ, 2. (*լիստո.*), ռուսական ազգային կանացի հագուստ է: Բառի իմաստը հայերենն արտահայտում է նկարագրական եղանակով [1, էջ 1284]: Բառը ռուսերենում հանդիպում է *Сарафанное радио* [9, с. 444] – *բամբասանք, ասեկոսե* իմաստն ունեցող դարձվածքում:

✓ *Фрак* – «ֆրակ», *ֆրանս. Frac* – տղամարդու սյուրտուկի մի տեսակ, որ առջևից կարճ ու բաց լանջեզրեր ունի, իսկ հետևից՝ երկար, միջատված տուտիկազնում են սովորաբար հանդիսավոր առիթների ժամանակ: Բառի իմաստը հայերենն արտահայտում է նկարագրական եղանակով [1, էջ 1610]: Բառը ռուսերենում հանդիպում է *как раку фрак* դարձվածքում, որ նշանակում է *անպետք, անիմաստ մի բան*:

Այսպիսով, հագուստների անուններ պարունակող դարձվածաբանական միավորներն արտացոլում են հայկական և ռուսական ազգային մշակույթները, քանի որ դրանք նկարագրում են որոշակի սովորույթներ, ավանդույթներ, կյանքի և մշակույթի առանձնահատկություններ, պատմական իրադարձություններ և շատ ավելին:

Հագուստի մի շարք անուններ թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում այսօր պատմաբաներ են. գործածությունից դուրս է եկել հագուստի տեսակը, ակտիվ բառապաշարից դուրս է եկել այն անվանող բառը: Վկայենք մի քանի պատմաբաներ ռուսերենում:

✓ *Епанча* – փոխառություն թուրքերենից (*şapundza*) [5, էջ 138], երկար, լայն թիկնոց: Բառը հանդիպում է *одного сукна епанча* դարձվածքում, որ ասվում է իրար նման մարդկանց կամ առարկաների մասին: *He нашего сукна епанча* դարձվածքում, որը նշանակում է «մեզ համապատասխան մարդ չէ»:

✓ *Кафтан* – փոխառություն թուրքերենից (*haftan*) [5, էջ 191], տղամարդու երկար հագուստ: Բառը հանդիպում է *Тришкин кафтан* դարձվածքում, որ նշանակում է արտաքին փոփոխություններ, որոնք ոչ մի լուրջ բանի չեն հանգեցնում: *Худая слава что без кафтана Савва; тот мудрён, у кого кафтан ядрён* դարձվածքներում. նշանակում է «գնահատել միայն արտաքին տեսքով»:

Հայերենում *շափնջի* (*şapundza*, փոխառություն թուրքերենից) [2, էջ 248] և *կապա* (*qaba* փոխառություն արաբերենից) [4, էջ 493]

հագուստների անվանումները նույնպես պատմաբաներ են, որոնք հայերեն դարձվածքներում չեն հանդիպում:

Հայերենում դարձվածքներ կան բառապաշարի ժողովրդախոսակցական շերտին պատկանող *փափախ* (*parak* փոխառություն թուրքերենից) [2, էջ 248]՝ *ոչխարի մորթուց կարված գլխարկ*, բառով և նշանակում է «տղամարդու արժանապատվություն, պատիվ», օրինակ՝ *գլխին փափախ դնել* – տղամարդու արժանապատվություն ունենալ, այն պահել, *փափախը ծուռ/լծեք դնել* – իրեն արժանապատիվ, նաև հոխորտ պահել, *գլխին փափախ տեսնել* – արժանապատիվ մարդ համարել, *գլխին փափախ ունենալ* – արժանապատվություն ունենալ, *փափախը գետնով տալ* – բռնած դիրքից ընկնել, *փափախը ծախել* – պատիվը զցել [3, էջ 1307]:

Տարբեր ժողովուրդների համար հագուստը, տարազը ոչ միայն վատ եղանակից պաշտպանվելու, այլև զարդարվելու, հասարակության մեջ ցուցադրվելու միջոց են եղել: Հագուստը շատ բան կարող էր պատմել այն կրողի մասին. որտեղի՞ց է նա, ի՞նչ տարիքի և դասի է, ամուսնացա՞ծ է, թե՞ անուրի, ի՞նչ զբաղմունք ունի և այլն:

Համեմատվող լեզուների դարձվածային միավորներում օգտագործվող հագուստի անունները տարբերվում են իրենց ծագմամբ, բառակազմով, օգտագործման հաճախականությամբ, ոճական և զգացմունքային արտահայտչականությամբ:

Մեր կողմից առանձնացվել են հայերեն և ռուսերեն հագուստների և դրանց մասերի առավել հաճախ հանդիպող հետևյալ անունները պարունակող դարձվածքները.

տաբատ/վարտիք - *итаны/ брюки/ трусы*, շապիկ - *рубашка /сорочка*, գլխարկ/ լաչակ/ փափախ – *шапка/ шляпа, կոշիկ - сапог (сапоги)*, *башмак*, փեշ - *подол /юбка*, գրպան – *карман*, զոտի – *пояс, ремень*.

Հայերենը ռուսերենից է վերցրել «Դիմավորում են հագուստով, ճանապարհում են խելքով» սասցվածքը – «встречают по одежке, провожают по уму», որի հիմքում ընկած է հենց այն միտքը, որ հագուստը եղել է նյութական բարեկեցության, հասարակության որևէ դասին պատկանելու խորհրդանիշ:

Ռուսերենում առավելաբար հանդիպում են *рубашка/сорочка* (շապիկ/վերնաշապիկ), *итаны/брюки* (անդրավարտիք), *трусы* (վարտիք),

карман (*գրպան*) բառեր պարունակող դարձվածքները, որոնք հիմնականում ցույց են տալիս մարդու նյութական վիճակը:

Ռուսերենում հաճախ *շապիկ (рубашка)* բառն այն չափանիշն է, որով որոշվում են **մարդու նվազագույն եկամուտը, ֆինանսական հնարավորությունները՝** *оставить (оставлять) в одной рубашке; остаться без рубашки* [9, с. 438], *проигрывать (спускать, проигрываются) до (последней) рубашки* [9, с. 536]:

Ճապիկը նաև **հաջողության, անշահախնդրության խորհրդանիշ է՝** *родиться в рубашке (сорочке)* [7, с. 390] – հաջողակ, բախտավոր, *рубаха-парень* – անկեղծ, ազնիվ, անշահախնդիր մարդ [7, с. 227]:

*Смирительная рубашка* դարձվածքը ծագում է բժշկական (հոգեբուժական) եզրույթից՝ նշանակելով «շարժվելու կարողությունը զրկող զսպաշապիկ»:

Հայերենում շատ են շապիկ բառ-բաղադրիչով դարձվածքները, որոնք նշանակում են.

անբաժան շապիկ – մեկին միշտ ուղեկցող [3, էջ 995], կրակե շապիկ – անբաժան մորմոքեցնող հանգամանք, այսքան շապիկ մաշած լինել – մեծ լինել, կենսափորձ ունենալ [3, էջ 995], վերջին շապիկը ծախել – ողջ ունեցածը տալ, ամեն նյութական գոհողության պատրաստ, շապիկը կարճ – խելապակաս, շապիկը կհանի, կտա – բարեգութ, մեկի վրային շապիկը հանել-դաժանորեն կեղեքել, շապիկի պես փոխել – վարքագծում հաստատ չմնալ [3, էջ 996], շապիկը մորուց իմանալ – մեկին հիմնովին ճանաչել, մի շապիկի մեջ մեծացած//քնած լինել – մտերիմ ընկերներ լինել, շապիկը հինգնել – մի կերպ ապրել [5, էջ 460]:

Հայերենը ռուսերենից է փոխառել *շապիկով ծնվել* – *родиться в рубашке (сорочке)* [8, с. 390] – *հաջողակ, բախտավոր լինել* դարձվածքը, որին համարժեք է նաև հայերեն *բախտավոր աստղի տակ ծնվել* [5, էջ 99] դարձվածքը:

Ռուսերենում հաճախ են հանդիպում միևնույն **աղբատություն, չքավորություն** իմաստով *անդրապարտիք (штаны) և վարտիք (трусы)* բառերի կիրառություններ դարձվածքներում՝ *оставить в одних штанах, оставить в одних трусах* – *աղբատացնել*, *проиграться до последних штанов, проиграться до последних трусов* – *աղբատանալ*:

Ծայրահեղ աղբառ մարդ, որը, սակայն, ձգտում է ներկայանալի երևալ իմաստով է գործածվում *արդրավարտիք (штань)* բառը *без штанов* ռուսերեն դարձվածքում:

**Վարքագիծ, կենսակերպ** է ցույց տալիս *трясти штанами* (տղամարդկանց մասին) [10, с. 543] դարձվածքը, որ նշանակում է «անբարո կյանք վարել»։ կանանց դեպքում նույն իմաստով գործածվում է *трепать юбки* (վերաբերում է միայն կանանց) [8, с. 481] դարձվածքը:

Հայերենում թուրքերենից ժողովրդախոսակցական բառաշերտին անցած *շարվար* և գրական բառաշերտին պատկանող *տաբատ, վարտիք* բառեր պարունակող մի շարք դարձվածքներ կան՝ շավարը լցնել //կեղտոտել// թրջել – ահ ու դողի մեջ ընկնել, շավարը չի կարողանում կապել – ինքնուրույն գործելու ընդունակ չէ, շավարը մուկ ընկնել – չիմանալ՝ ինչ անել [3, էջ 993], տաբատը երկարիլ – իրեն շատ արտոնյալ զգալ, երկար տաբատը կարճացնել – նվազեցնել սահմանափակել, տաբատը մաշել – մի տեղ տևաբար նստել [3, էջ 1244], թույլ վարտիք – անկամ,կորով չունեցող մարդ [3, էջ 1230], վարտիքը թրջել – ահով բռնվել, առանց վարտիքի – աղբատ, վարտիքի մեջ պահել – հեռու չթողնել, կնոջ վարտիքը մտնել- կնոջ կամքով շարժվել,տղամարդու դիրք չունենալ [3, էջ 1232]:

Ռուսերենի՝ հագուստների անուններ պարունակող դարձվածքներում հաճախադեպ են *шапка, шляпа* բառերով կազմությունները՝ *снимать(снять) шляпу* (перед кем-нибудь) [11, с. 503] – *հարզանքի տուրք մատուցել*, *ломать шапку* (перед кем-нибудь) [7, с. 362] – *ցածրանալ*, *иншапшанаш*, *пустить шапку по кругу* [11, с. 440] – *ինչ-որ մեկի օգտին դրամ հավաքել*, *под шапочный разбор* [ 8, с. 377] – *հասնել վերջում*, *шапочное знакомство* [8, с. 532] – *հպանցիկ ծանոթություն*, *давать по шапке* [8, с. 124] – *հեռացնել, վռնդել*, *кинуть шляпу в воздух* [11, с. 237] – *տրախանալ, ցնծալ*, *дело в шляпе* [8, с. 132] – *ամեն ինչ կարգին է*:

Ռուսերենի *тяжела ты, шапка Мономаха* դարձվածքն ունի պատմական ծագում: Խոսքը, ըստ ավանդության, Կիևի մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախին պատկանող թագի մասին է, որը խորհրդանշում է թագավորի իշխանությունը [11, с. 593]:

Հայերենը ռուսերենից վերցրել է վերոնշյալ դարձվածքը՝ *ծանր է Մոնոմախի գլխարկը* տարբերակով [3, էջ 298], որ նշանակում է «մեծ

բեռ, պատասխանատու պարտականություն»։ Հայերենն ունի նաև *ծանր գլխարկ* – դժվարին հանձնարարություն [3, էջ 625] դարձվածքը, որ կարող է համարժեք համարվել վերոնշյալին։

Հայերենում *գլխարկ* բառով կազմված դարձվածքները հիմնականում **պատիվ, հարգանք** են նշանակում՝ *գլխարկը հանել*// խոնարհել – հարգանք, ակնածանք արտահայտել, *գլխարկը գետնով տալ* – պատիվը գցել, ամոթալի վիճակի մեջ գցել [3, էջ 531]։

Հայերենում կան *լաշակ* (lacak, փոխառություն պարսկերենից) [1, էջ 265]՝ *գլխանոց, քող*, բառով բաղադրված դարձվածքներ, որոնք նշանակում են «**կնոջ պատիվ, բարոյականություն, նաև կնաբարո տղամարդ**»՝ *լաշակ չունենալ* – անամոթ լինել, *լաշակը ծառին գլուխը ելլել* – պատիվը, մաքրությունը կորցնել, *լաշակ կապել* – կին դառնալ, կնաբարո լինել. տղամարդուն ուղղված արհամարհական արտահայտություն է, *լաշակս գլխին* – արհամարհական արտահայտություն տղամարդու վերաբերյալ, *լաշակը գլխին ընկնել* – որբևայրի դառնալ [5, էջ 260]։

*Փափախ*՝ ոչխարի մորթուց կարված գլխարկ (*parak* փոխառություն թուրքերենից) [4, էջ 493] *քառապաշարի* ժողովրդախոսակցական շերտին պատկանող բառով հայերենն ունի մի շարք դարձվածքներ, որ նշանակում են «**տղամարդու արժանապատվություն, պատիվ**»՝

*գլխին փափախ դնել* – տղամարդու արժանապատվություն ունենալ, *փափախը գետնով տալ* – բռնաձեռք դիրքից ընկնել, *փափախը ծախել* – պատիվը գցել, *փափախը ծուռ/թեք դնել* – իրեն արժանապատիվ, նաև հոխորտ պահել, *փափախը պոզին դնել* – գոռոզանալ, *մի փափախի տակ դնել* – նույն շարքին դասել, տարբերություն չդնել, *գլխին փափախ տեսնել* – արժանապատիվ մարդ համարել, *գլխին փափախ ունենալ* – արժանապատվություն ունենալ [3, էջ 1307]։

Դիտարկենք *կոշիկ* բառ-բաղադրիչ պարունակող դարձվածքները հայերենում և ռուսերենում։

Ռուսերեն դարձվածքներում առանձնանում են կոշիկի, նրա տեսակների, մասերի անվանումներով դարձվածքներ՝ *сапог(сапогу)*, *башимак*, *валенок*, *галоши*, *штиблеты*, *тапочки*, *сандалии*, *каблук*<sup>1</sup>,

<sup>1</sup> *Каблук* - ռուսերենը փոխառել է թուրքական լեզուներից. հանդիպում է՝ XVI դարից սկսած։ Կազմված է արաբերեն *к'ab* – կրունկ արմատի ածանցմամբ։

*лапоть, портянки (портянка), стельки, шпильки*: Դրանցից շատերն այսօր պատմաբաներ են, որովհետև նշում են ոսոնամանի տեսակներ, որոնք այլևս չեն կրում, սակայն այս բառերով կազմված դարձվածքները շարունակում են մնալ ռուսերենի ակտիվ բառապաշարում, քանի որ նրանց արտահայտած իմաստներն այսօր էլ արդիական են. նշում են «**մարդու կենսակերպ, վարքագիծ**»՝ *в сапогах (сапожках) ходит* [11, с. 569] – շատ թանկ մի բան, 2. դժվար ճարվող մի բան, *два сапога – пара* [8, с. 408] – իրար նման, *садиться в галошу* – պարտվել, անհարմար իրավիճակում հայտնվել, *посадить в галошу* – անհարմար վիճակի մեջ դնել, *под каблуком /башимаком /кого-либо, чьим-либо, у кого-либо* [8, с. 188] – կախվածության մեջ, ենթակայության տակ լինել (հիմնականում կնոջ): Վերջինս համարժեք է *держаться за бабью (мамкину) юбку* դարձվածքին, որ ասվում է թուլամորթ տղամարդկանց մասին: Այս դարձվածքն իր հերթին համարժեք է հայերենի *կնոջ վարտիքը մտնել* – կնոջ կամքով շարժվել, տղամարդու դիրք չունենալ [3, էջ 1232] դարձվածքին:

Հայերենում *կոշիկ* (*kafsik*, փոխառություն պարսկերենից) [2, էջ 687] բառ-բաղադրիչ պարունակող դարձվածքները ցույց են տալիս **շարժում, արագություն, հարմարություն՝**

*մեկուն կոշիկ հագցնել*- մեկից առաջ ընկնել, *շատ կոշիկ մաշել* – շատ քայլել, գնալ-գալ, *կոշիկների մեջ աղ ցանել* – շտապեցնել, հասկացնել, որ գնա, ճանապարհ դնել, *կոշիկը նեղ գտնել* – իրեն հարմար չհամարել, *կոշիկից վեր էլնել* – իր հասողությունից վեր բաների մասին դատել:

Հայերենում *ոտնաման* բառով դարձվածքներ չկան, սակայն Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի 1031-րդ էջում հանդիպում ենք *ոտուց աման* դարձվածքին, որ նշանակում է «կյանքի անբաժան ընկեր» [3, էջ 1031]:

Թե՛ ռուսերենում և թե՛ հայերենում շատ են հագուստների մասերի անվանումներով կազմված դարձվածքները: Դրանցից հատկապես առանձնացնենք *карман – գրպան, подол – փեշ, пояс – գոտի* բառ-բաղադրիչներ պարունակող դարձվածքները:

Ռուսերենում *карман* բառով բաղադրված դարձվածքները ցույց են տալիս **Ֆինանսական տարատեսակ հարաբերություններ, վիճակ:**

**Հարստություն են խորհրդանշում**՝ полный (тугой) карман [8, с. 195], толстый (тугой) карман [8, с. 195], набить карман [8, с. 259] դարձվածքները:

**Աղքատություն են խորհրդանշում**՝ ветер в кармане гуляет [12, с. 57], ветер свистит в кармане [8, с. 195], в кармане вошь на аркане [12, с. 80], карманная чахотка [8, с. 517], пустой (тощий) карман [12, с. 232] դարձվածքները:

**Տարատեսակ հատկանիշներ և հարաբերություններ են խորհրդանշում**՝ болеть за свой карман [12, с. 32]- ազահություն, карманные дела [12, с. 143] – փողի մասին մտահոգություն, *вытрясти карман* (кого-либо, чей-либо) [10, с. 227] – ծախսել, *выворачивать карман* [11, с. 199] – ծախսել վերջին միջոցները, *из собственного кармана* [12, с. 232] – հոգալ սեփական միջոցներով, *не по карману* [8, с. 195] – սեփական հնարավորություններից դուրս, *из государственного кармана* [12, с. 232] – պետության հաշվին, *ударить (бить) по карману* [8, с. 36] – նյութական վնաս պատճառել *лазить по карманам* ֆինանսական հարցերով զբաղվել [12, с. 274], *за словом в карман не лезет (не ходит)* – խոսքում ճարպիկ [8, с. 195], *жить по карману* [12, с. 232] – ապրել սեփական միջոցներին համապատասխան դարձվածքները:

Հայերենում ևս *գրպան* բառը ֆինանսական տարատեսակ հարաբերությունների, վիճակի, հարստության, աղքատության խորհրդանիշ է:

**Հարստություն են խորհրդանշում**՝ գրպանը լիքը – հարուստ, գրպանը լցնել /հաստացնել – հարստանալ, հարստացնել [3, էջ 363], տռուզ գրպան – մեծ փողեր վաստակած [5, էջ 178], գրպանները յուրդոտել – հարստանալ [3, էջ 364] դարձվածքները:

**Աղքատություն են խորհրդանշում**՝ գրպանում մկներ խաղալ/պարել – աղքատ լինել գրպանը դատարկ -բոլորովին անփող, գրպանում քամի խաղալ – աղքատ լինել [5, էջ 178] դարձվածքները:

**Առատաձեռնություն, շռայլություն են խորհրդանշում**՝ գրպանը ծակ – վատնող, գրպանը բաց անել – առատաձեռնորեն ծախսել, գրպանը լայն բացել – ոչինչ չխնայել, ծախսել [3, էջ 362] դարձվածքները:

**Ֆինանսական միջոցների ծախսում, յուրացում են խորհրդանշում**՝ գրպանը դնել-յուրացնել, գրպանել [3, էջ 361-362], գրպանը անցնել – մեկի սեփականությունը դառնալ [5, էջ 178], գրպանը

դատարկել //գրպանը թեթևացնել – մեկին ծախսի տակ զցել, ծախսել ամբողջ դրամը, գրպանը մնալ – յուրացվել, գրպանը մտնել – 1. գողանալ, 2. բաժին ստանալ, օգտվել գրպանը սրբել – մեկի փողերին տիրանալ, գրպանը քանել–անանկացնել, մինչև վերջին կոպեկը ծախսել, գրպանին դիպչել/խփել, հարվածել/ – նյութական վնաս պատճառել [5, էջ 178] դարձվածքները:

Քիչ չեն *գրպան* բառ- բաղադրիչով դարձվածքների կառուցվածքային և իմաստային համընկնումները հայերենում և ռուսերենում: Համարժեք են *խուքի համար գրպան չմտնել* և *за словом в карман не лезет (не ходит)* – խոսքում ճարպիկ, *գրպանում քամի խաղալ* և *ветер свистит в кармане*– աղքատ, *գրպանը դատարկ* և *пустой карман* – աղքատ, *գրպանին դիպչել/խփել/* և *ударить (бить) по карману*– նյութական վնաս պատճառել դարձվածքները: Հայերենում *գրպանին դիպչել/խփել/* դարձվածքն ունի նաև *նյութական պատիժ կիրառել* իմաստը [3, էջ 363]:

Ռուսերենում *подол-փեշ* բառով դարձվածքները շատ չեն՝ *держатся за бабю юбку նույնն է держатся за подол* – կնոջը ենթարկվող տղամարդ, *вертеть подолом նույնն է трещать юбки* – թեթևաբարո կին: Վերջինս հայերենում համարժեք է *փեշեն ծուռ/կորած, փեշը գլուծը գցած, փեշը կեղտոտ* – դարձվածքներին, որ նույնպես նշանակում են «անբարոյական կին»:

Հայերենում *փեշ* բառով դարձվածքները շատ են: Սրանք **խորհրդանշում են մարդկային տարաբնույթ հարաբերություններ՝ հուզմունք, իշխանություն, կապվածություն, խնդրանք, քծնանք, զիջում, սիրահարվածություն** և այլն, ինչպես՝ *մոր փեշեն եղած* – հազիվ ծնված, *փեշերը բռնել* – հուզվել, *փեշեն չգատվել* // *փեշը բաց չթողնել* – կայել, պոկ չգալ, *փեշի տակ մտնել* – ծվարել, *փեշերը վրա բերել* – մի ավարտի գալ, ծայրի հասնել, *փեշերը տարածել* – իշխանությունը ծավալել, *փեշը քաշել* – գսպել, *փեշերը հավաքել* – պատրաստվել մի բան անելու, *փեշերը քշտել* – եռանդագին գործի անցնել, *փեշերն ընկնել* – խնդրել, աղաչել, *փեշերը լիզել* – քծնել, *փեշից կախ ընկնել* – մեկից չպոկվել, *փեշերի տակ թաքնվել/ փեշը բռնել* – ապավինել, *փեշերի շուրջը պտտվել* – սիրահարվել, *փեշի քարը թափել* – զիջել, *փեշը թափ տալ* – հրաժարվել, հեռանալ, *փեշը կարճ* – խելքից պակաս [3, էջ 1308]:

Հայերենի *փեշը դաշտարկ* – *աղբատ* և *փեշը ծակ* – շոսյ դարձվածքները դարձվածային տարբերակներ են կազմում *գրպանը դաշտարկ* և *գրպանը ծակ* դարձվածքների հետ:

Հայերենի *գրպանը դաշտարկ* և ռուսերենի *пустой карман* դարձվածքները համընկնում են կառուցվածքով և իմաստով: Շոսյ բառի դիմաց ռուսերենը գործածում է *держать карман шире* դարձվածքը:

Ռուսերենում *пояс, ремень* – *գոտի* բառով դարձվածքները քիչ են՝ *кланяться в пояс* – կռանալ [12, с. 398], *заткнуть за пояс* – գերազանցել ինչ-որ մեկին, ցույց տալ իր առավելությունը [12, с. 398], *затягивать ту же ремень/пояс* – պատրաստվել սովի և այլ գրկանքների [11, с. 252]:

Հայերենում, ի տարբերություն ռուսերենի, *գոտի* բառ-բաղադրիչով դարձվածքները քիչ չեն. սրանք **խորհրդանշում են ինչպես լավ ապրուստ, այնպես էլ աղքատություն, դժվարություններ՝ գոտին թուլացնել** – պահանջները նվազեցնել, *գոտին լայն կապել*- լավ ապրուստ ունենալ, *գոտին լեցնել* – վաստակել, կուտակել, հարստանալ, *գոտին պնդացնել* – կուշտ ուտել, փորը կշտացնել [3, էջ 353], *գոտին ձգել* – նյութական դժվարություն քաշել, չարքաշ ապրել [3, էջ 353]:

Հայերենի *գոտին ձգել* դարձվածքը համարժեք է ռուսերենի *затягивать ту же ремень դարձվածքին*. երկուսն էլ նշանակում են «նյութական դժվարություններ»:

Ամփոփում:

Հազուստի անուններով դարձվածքների՝ որպես մշակութային տեղեկատվություն կրող միավորների քննությունը ցույց տվեց, որ հազուստի անուններով ռուսերեն դարձվածաբանական միավորներում կարևոր դեր է խաղում դեռտատիվ՝ նախատիպային նշանակությունը: Դարձվածաբանական այս միավորներն իրենց բառապաշարում պարունակում են նյութական մշակույթի ոլորտի տարբեր այն հազուստի մասին, որը ռուսները կրում էին առաջ կամ կրում են ներկայումս: Ռուսական հազուստի մի շարք անվանումներ հայերենի համեմատությամբ ոչ համարժեք կամ ոչ լրիվ համարժեք են, ինչը ռուսական դարձվածաբանական միավորների իմաստներին հաղորդում է ազգային և մշակութային ինքնություն: Բացի այդ՝ դարձվածաբանական միավորները պարունակում են տեղեկատվություն հայկական և ռու-

սական իրականության մեջ հագուստի օգտագործման մասին: Նախատիպային իրավիճակը, որը համապատասխանում է դարձվածաբանական միավորների բառային իմաստին, շատ դեպքերում վերականգնվում է պատմական և ստուգաբանական բառարանների օգնությամբ:

Ռուսերենի՝ հագուստի անուններով մեր կողմից առանձնացված դարձվածաբանական միավորների թեմատիկ խմբերը իմաստային և կառուցվածքային նմանություն են գտել հայկական շատ դարձվածքների հետ, բայց ոչ բոլոր դեպքերում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

#### Տեսական գրականություն

1. *Բաղիկյան Խ.*, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. *Բաղիկյան Խ.*, Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000:
3. *Գևորգյան Ե.*, Հայերենի դարձվածքները, Ե., 1969:
4. *Մուրվաչյան Ա.*, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., 1959:

#### Բառարաններ

1. *Աճառյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հ.Ա, Ե., 1926:
2. *Աճառյան Հ.*, Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն, Ե., 1902:
3. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
4. *Մալխասյանց Ս.*, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944:
5. *Մուրվաչյան Ա.*, *Գալստյան Ս.*, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
6. *Бирях А. К., Мокиенко В. М., Степанова Л. И.* Русская фразеология. Историко-этимологический словарь: ок. 6000 фразеологизмов. М.: Астрель, 2007.
7. *Васильев А.И.* Фразеологический словарь языка М. А. Шолохова. В двух томах. Том 2. Стерлитамак: Фобос, 2019.

8. *Молотков А.И.* Фразеологический словарь русского языка. М.: Русский язык, 1986.
9. *Степанова М. И.* Фразеологический словарь русского языка. СПб.: Виктория плюс, 2023.
10. *Тихонов А. Н., Ломов А. Г., Ломова Л. А.* Фразеологический словарь русского языка. М.: Просвещение/Дрофа, 2014.
11. *Фёдоров А.И.* Фразеологический словарь русского литературного языка. М.: АСТ: Астрель, 2008.
12. *Федосов И.В., Лапицкий А.Н.* Фразеологический словарь русского языка. М.: ЮНВЕС, 2003.

## СРАВНИТЕЛЬНЫЙ ИССЛЕДОВАНИЕ АРМЯНСКИХ И РУССКИХ ИДИОМ СО СЛОВАМИ-КОМПОНЕНТАМИ ОДЕЖДЫ ИЛИ ЕЕ ЧАСТЕЙ

Р. П. ДЖУЛФАЯН, Г. Л. ХАЛАТЯН

АГПУ им. Х. Абовяна

Фразеологические единицы со словами-компонентами одежды или ее части представляют собой образные эмоционально-оценочные подходы национального мировоззрения. Создаётся внутренний стереотип, содержащий основную информацию, который отражает народную культуру. В статье проводится сравнительная характеристика армянских и русских фразеологизмов и устойчивых сочетаний слов-компонентов, называющих одежду или ее части, подчеркивается, в каком из сопоставляемых языков чаще встречаются фразеологизмы с названиями одежды и составляющих ее частей, приводятся национальные обоснования названий, формирующихся разговорной речи.

**Ключевые слова и выражения:** компоненты, называющие одежду, слова-компоненты, называющие части одежды, особенности культуры, слова, не имеющие эквивалента, слова, не имеющие частичного эквивалента, единицы, несущие культурную информацию.

**A COMPARATIVE EXAMINATION OF ARMENIAN AND RUSSIAN  
IDIOMS WITH WORD-COMPONENTS OF CLOTHES OR ITS PARTS****R. JULFAJAN, G. KHALATYAN****Kh.Abovyan ASPU**

Phraseological units with word-components of clothes or its parts represent pictorial emotional and evaluative approaches to people's worldview. An internal stereotype is created that contains basic information which reflects folk culture. In our article, we have tried to give a comparative description of Armenian and Russian phrases with word-components of clothes or its parts emphasizing in which language are most often found idioms composed with clothes or its parts and what is the justification of its folk characteristics.

**Key words:** *components naming clothing, component words naming parts of clothing, cultural features, words that do not have an equivalent, words that do not have a partial equivalent, units carrying cultural information.*

**Информация о статье:** статья поступила в редакцию 26 февраля 2024 г., подписана к печати в № 1 (118) 2024 27.04.2024.